

քրիստոնեայ դարձաւ՝ «in hoc vinces» մակագրութեամբ խաչի նշանը տեսնելուց յետոյ: «Քո խաչիդ նշանը երկնքի վերայ տեսնելով, և որպէս Պօղոս ոչ մարդկային կոչումն ընդունելով», օրհներգութեան մէջ եղած կտորը նման է Թէոդորիտի եկեղեցական պատմութիւնից բերած կոչումին. Սոգոմէնոսը քրիստոնէութիւն ընդունելու փաստերից մէկն այդ նշանն է համարում:

Այս հարցի վերաբերեալ վաղուց մի ամբողջ գրականութիւն կայ: Եւ հարցը դնում են այսպէս. արդեօք այդ դէպքը հրաշքի՞ բնաւորութիւն ունէր, թէ պատահական մի երևոյթ էր: Բանն այն է, որ արեգակի շուրջը երբեմն երևան են գալիս լոյսի այնպիսի շերտեր, որոնք, — եթէ այս երևոյթը «Parhelion» = «կեղծ արեգակ» կոչուած երևոյթն է և երևում է կէսօրի մօտերը, — խաչի ձև են ստանում: Սակայն այս հանգամանքների մէջ այդպիսի հարցերի դիմելու հարկ չկայ: Իսկապէս թէ մէկ և թէ միւս բացատրութիւնը երկսայրի են: Չէ՞ որ հրաշքի համար ստեղծագործող արարքի կարիք չկայ. Աստուած օգտւում է այն ոյժերով, որ աշխարհիս վերայ կան: Ինչպէս էլ որ այս փաստը բացատրենք՝ գերբնական միջնորդութեամբ թէ բնական տարրերով, — գործն էապէս չէ փոխւում:

Մենք գործ ունինք այստեղ ոչ թէ իսկապէս նրբին տարբերութիւնների հետ, այլ իրողութեան հաստատութեան հետ: Θεοσφεία-ի մասին երեք պատմութիւն կայ. ըստ Լակտանցիոսի, Եւսեբիոս Կեսարացու և Սոգոմէնոսի: Այստեղ Ռուֆինոսը, Սոկրատը և Թէոդորիտը պատմական արժէքից զուրկ են, որովհետեւ նրանք հաղորդում են ուրիշներից ստացած տեղեկութիւնները:

Ամենահին տեղեկութիւնը Լակտանցիոսինն է (De mortibus persecutorum, էջ 44): Լակտանցիոսի գրութիւնը՝ որի մէջ պատմւում է այս դէպքի մասին, իմ կարծիքով երևան է եկել 313 թուին. իսկ ուրիշների կարծիքով 315-ից ոչ ուշ ¹⁾): Լակտանցիոսը հետեւեալն է պատմում: Կոստան-

1) Հմմտ. В. В. Болотовъ, Отзывъ о сочиненіи проф. А. И.

դինը կանգնեց Մուլվիոսի կամուրջի դիմացը: Մօտենում էր հոկտեմբերի 27-ը: Քնի մէջ (in quiete) կոստանդինը ներշնչումն է ստանում (commonitus est), Աստուծոյ երկնային նշանը վահանների վրայ նկարել տալու (coeleste signum Dei): կոստանդինն այդպէս էլ արաւ, ինչպէս որ նրան յայտնուած էր. վահանների վերայ նկարել տուեց քրիստոնէութեան  մենագիրը և այդ նշանով զինուած ճանապարհ ընկաւ: Տեղի ունեցաւ ճակատամարտը Մակսենտիոսի հետ և յաղթութիւնը մնաց կոստանդինի կողմը:

Արեգակնային նշանի մասին այստեղ խօսք անգամ չկայ, իսկ մենագիրը նկարելու հրամանը կոստանդինը քնի մէջ ստացաւ: Եթէ այս դէպքի մասին միայն լակտանցիոսը պատմէր, այն ժամանակ այդ մասին այլևս վիճել չէր լինի, և գործը կատարելապէս բնական ձևով կներկայանար. պէտք է նաև յիշել, որ կոստանդինը քիչ զօրք ունէր քան Մակսենտիոսը: Գալլական լեգիօններն այս արշաւանքը միանգամայն յանդգնութիւն էին համարում. պատերազմի դուրս գալու միտքը ոչ ոք չէր խրախուսում. զօրքի մէջ տրտունջ կար: Բոլոր նշանները դժբաղդութիւն էին գուշակում: Իսկ Մակսենտիոսն իւր ձեռքի տակ ունէր փորձուած պրետորիաներին, որոնք հոկտեմբ. 27-ի ճակատամարտի մէջ ցոյց տուին, թէ իսկապէս այդ փառքին արժանի էին. նրանք քաջաբար ընկան պատերազմի դաշտում, սակայն մի ոտի չափ տեղ անգամ թշնամուն չզիջան: Թէև սարսափելի կռիւր առաջն էր, չնայած դորան կոստանդինը զնում էր համոզուած և այդ համոզմունքով կամենում էր համակել և իւր զօրքը: Պէտք է ի նկատի ունենալ, որ հաւատի բացակայութիւնը դէպի հեթանոսների աստուածները շատ հեշտութեամբ է յարմարւում զանազան սնտիապաշտութիւնների հետ: Մակսենտիոսը կատարեց հեթանոսական բոլոր սուրբ խորհուրդները—sacramenta, հարցուկների միջոցով

Садова, «Древне—христианскій церковный писатель Лактанцій» (1895 г.). «Журналь Сов. Сиб. Дух. Академіи». 1895|6 №. 42 142—143.

քննել տուեց զոհած կենդանիների փորձափքը, և Սիրիլեան գրքերի պատգամները¹⁾։ Այսպիսով բոլոր նախադուշակ նշանները (= omnia) Կոստանդնի դէմ էին։ Զօրքի պատերազմիկ ոգին բարձրացնելու մեծ կարիք էր զգում նա։ Այս նպատակով էլ, գուցէ, հրամայեց վահանների վերայ խորհրդաւոր նշանը նկարելով յաղթութիւն տանել, որը և յայտնեց նա զօրքին։ Այդ նշանի ազդեցութիւնն այնքան աւելի մեծ էր, որքան նրա նշանակութիւնն անհասկանալի էր։ Եւ այսպէս, այս պատմութեամբ ամէն բան բնական և հոգեբանօրէն բացատրելի է դառնում։

Կոստանդնի քրիստոնէութիւն ընդունելու յաջորդ պատմութիւնը պատկանում է Եւսեբիոս Կեսարացուն. այդ դէպքի մասին նա պատմում է երկու անգամ։ Առաջին անգամ նա յիշում է իւր պատմութեան Թ. գրքում (IX. 9, 2.), որ գրուած է 313 և 323 թուականների մէջ։ Եւսեբիոսը Կոստանդնին պատկերացնում է վերին աստիճանի բարոյական մի մարդ, որ ժառանգել է իւր հօր բոլոր լաւ յատկութիւնները։—«Երբ նա», պատմում է Եւսեբիոսը, «գնում է Հռովմն ազատելու, իւր աղօթքի մէջ օգնութեան կանչեց երկնային Աստծուն և նրա Բանին՝ Յիսուս Քրիստոսին»։ Վահանների վերայի տրտաքին նշանների մասին ոչ մի խօսք չէ յիշատակում Եւսեբիոսը։ Կոստանդինը ճակատամարտի դուրս եկաւ, յաղթութիւն տարաւ և վկայեց իւր հաւատը դէպի Քրիստոս։ Այս վկայութիւնն սքօղուած բնաւորութիւն ունի. նա հրամայեց Հռովմում իւր արձանը կանգնեցնել՝ Փրկիչ խաչի նշանը ձեռքին։ Արձանի ձեռքին խաչ կար, բայց ոչ թէ բարձրացրած խաչ, որպէս քարոզչի ձեռքին է լինում, այլ տէգ՝ որ


¹⁾ Հետաքրքրական է յիշատակել մի դէպք։ Դորանից քիչ առաջ Մակսենտիոսը յաջողել էր յաղթել Օգոստոս Սեվերոսին։ Այդ ժամանակ Հռովմի ընդհանուր քաղաքապետն էր (praefectus urbis Romae) Աննիոս Անուլիոս անունով մէկը։ Մնտիապաշտ Մակսենտիոսը Կոստանդնի դէմ արշաւանքի դուրս գալուց առաջ էլ Հռովմի քաղաքապետ է նշանակում Աննիոս անունով մէկին, ենթադրելով, թէ այս հանդամանքն իւր յաջողութեանը կնապաստէ։

վերջանում էր խաչով: Այդպիսով այդ նշանը երկու կերպ
կարելի էր հասկանալ, հեթանոսները ենթադրում էին, որ
յաղթութիւն տարուեց Կոստանդնի գէնքի ոյժով, իսկ
քրիստոնեաները դա վերագրում էին խաչի զօրութեանը:

Միւս տեղեկութիւնն այս գէպքի մասին գտնւում է
Եւսեբիոս Կեսարացու Vita Constantini երկասիրութեան
մէջ, որ գրուած է 337—340 թուականներին: Այս երկա-
սիրութեան առաջին գրքի մէջ (Ա. 26—31) նախ
Եւսեբիոսը հաղորդում է միևնոյն գէպքի մասին, որ
գտնւում է պատմութեան մէջ, և բ) միևնոյն ժամանակ
և արձանի մասին եղած պատմութեան մէջ համեմատու-
թեամբ նախկին հաղորդածի նոր բան չկայ. գ) Սակայն
երբ խօսում է արշաւանքից առաջ կատարած աղօթքի
մասին, — աւելացնում է. «Իրեն օգնութեան կանչեց
ամէնքի Աստուծուն և Քրիստոսին և յաղթութեան
նշանը — փրկութեան նշանաբանը . . .», այսինքն, երևի
Ս. Խաչը: Երկրորդ՝ բացի դրանից Եւսեբիոսը, առաջ էլ
յիշատակում է θεοσημεία-ի մասին եղած տեղեկութիւնը,
զգուշացնելով, որ գէպքը գերբնական է, սակայն այդ
վերցուած է ճշմարտապատում աղբիւրից, — ինքը թագաւորը
շատ տարիներ յետոյ պատմում է այդ մասին և երգումով
հաստատում: «Կէսօրի մօտերքը, երբ օրը թեքուել էր գէպի
երեկոյ (մեր հաշւով ժամի 3-ին), կայսրը տեսաւ արեգա-
կից վեր (ὑπερχείμαρον τοῦ ἡλίου) խաչի նշանը՝ «սրանով
կ'յաղթես», (τούτω νίχα—hoc vince) վերնագրով: Սարսափը
տիրեց նրան և զօրքին: Գիշերը երևաց նրան Քրիստոս՝
խաչը ձեռին և հրամայեց նոյն խաչի օրինակով շինել տալ
և այդ նշանով դուրս գալ թշնամու դէմ: Կոստանդինն
առաւօտեան պատմեց իւր երազը բարեկամներին, նկարիչ-
ների կանչեց, և հրամայեց այդ պատկերը նկարել (labarum¹):

¹) Այս խօսքը պատկանում է Պիրինեան լեռների բնակիչ
Բասկերին և ոչ թէ յունարէն կամ լատիներէն է: Կարող էր նաև
գործ ածուել Գալլիայում, շնորհիւ այն հանգանքի, որ մօտ էր
Պիրինեան լեռներին և Բասկերին: Նրա բառացի նշանակութիւնը
երևի «գրօշակ» է:

Ապա հետևում է նշանի
 նկարագրութիւնը. այս
 նկարագրութիւնն էլ նոյն
 հետեանքին է հասցնում,
 ինչ որ Լակտանցիոսի
 պատմութիւնը: Նշանը
 հաստատուած էր փայտի
 ծայրին և չորս կողմը
 թանկագին քարերով ու-
 կեայ պսակ էր հիւսած,
 մետաքսէ կտորի վերայ,
 որը ամրացրած էր փայտի
 վրայ. բացի դորանից այդ
 մետաքսի կտորի վրայ
 կային նաև Կոստանդին
 մեծի և նրա որդիների
 պատկերները: Մենագիրը
 զարդարում էր նաև Կոս-
 տանդինի սաղաւարտը,



իսկ Եւսեբիոսը վահանների մասին յիշատակութիւն չէ
 անում:

Բողոքականները շատ վաղուց տեսած են նայում այս
 պատմութեան վերայ, առաջին պատմութիւնից նրա ունե-
 ցած տարբերութեան պատճառով: Սակայն այդ տարբե-
 րութիւնը ոչ մի նշանակութիւն չունի: Կոստանդինը կա-
 րող է պատմութիւնը լրացնել, հաղորդել այն աւելի ման-
 րամասր և լաւ: Մէջ են բերում դաւանաբանական նկատու-
 ղութիւններ, որպէս թէ սիրոյ և խաղաղութեան Աստծուն
 Եւսեբիոսը պատկերացնում է իբրև պատերազմի Աստուած,
 ուստի և ամբողջ պատմութիւնը գնահատութիւնից զուրկ է
 և պէտք է մոռացութեան տալ, ինչպէս *natürlich erlogen*
 (հաւանականօրէն մտածուած): Այսպիսի քննադատութիւնը
 ոչ մի լուրջ առարկութիւն չի վերցնում: Ասածս նորա
 համար չէ, որ մենք պարտաւոր ենք Եւսեբիոսի սրբու-
 թիւնը պաշտպանել, որ այս դէպքում—այդպիսի ենթա-

դրութիւններէ հիմք չէ տալիս, այլ նրա համար, որ այդ հակաճառութիւնը կանոնաւորապէս անօգուտ է: Ասում են, եթէ ամենքին էր յայտնի այդ դէպքն, այն ժամանակ հարկ չկար, որ Կոստանդինը երդումով հաստատէր այդ: Սակայն երբ խնդիրը այդ ձևով է դրւում, խորհուրդ կտայի գիտնականներին իրենց ակնօցները մաքրել: Որովհետեւ երդման պատմութիւնը դրուած է հրաշքի նկարագրութիւնից առաջ: Իսկ այդ հրաշքը, որ հաղորդում է Եւսեբիոսը, երկու մասից է կազմուած՝ ա) նշանից և բ) երազից:

Երազի պատմութիւնը Եւսեբիոսի համար անկասկած է թւում, որովհետեւ այդ պատմել է Կոստանդինը. և չէ որ միայն նա կարող էր իսկապէս այդ երազի ուղիղ բովանդակութիւնը հաղորդել: Հրաշքի պատմութիւնից առաջ Կոստանդինի երդման հաստատութիւնը գնելով Եւսեբիոսը փորձուած նուրբ հոգեբան է հանդիսանում. արդեօք հաւանական է, որ Քրիստոսի մասին ոչինչ չիմացող հեթանոսը տեսնէր երազում նրան: Եւսեբիոսի մէջ հոգեբանօրէն առաջացած հիմնաւոր կասկածը ցրուեցաւ Կոստանդինի երդումով: Հանուրի այն հաւաստիացումը, որ երդման կարիք չկար, հիմք չի ունենայ նաեւ այն դէպքում, եթէ հրաշքի կենդրոնական ծանրութիւնը մենք տեղափոխենք θεοσημεία-ի վերայ: Ասում են թէ այդ նշանն ամէնքը տեսան երկնքի վերայ և Եւսեբիոսը կարող էր այդ իմանալ և ոչ թէ Կոստանդինից լսել: Սակայն Եւսեբիոսը շատ զգոյշ է արտայայտում իւր իմացածը կամ ասելիքը, ըստ Եւսեբիոսի խաչի նշանը տեսան բոլոր զինուորականները στρατιωτικόν ἄπαν, իսկ այդ գուցէ և միայն զօրք է նշանակում: Եւսեբիոսը στρατιά կամ στρατεύματα արտայայտութիւնը չէ գործ դրել, որն անպայման ամբողջ զօրք կնշանակէր: Այն միտքը, թէ երկնքի վերայ երևեցած խաչի նշանն ամէնքին յայտնի էր, — այս հիմունքներով քննադատօրէն դեռ ևս չէ հաստատուած: Միևնոյն ժամանակ ըստ երևոյթին գալլական լեզիօնները զինուորական ծառայութիւնը վերջացնելով վերադարձան իրենց հայրենիք և այնտեղ հաղորդեցին երկնային երևոյթի մասին,

իսկ այդ զինուորներին ոչ մէկը գուցէ Պաղեստին չմտաւ, ուստի և Եւսերիոսը *θεοπραξία*-ի մասին ճշգրիտ տեղեկութիւններ ոչ ոքից ստանալ չէր կարող:

Եւսերիոս Կեսարացու խաչի նշանի պատմութեան գնահատութեան ժամանակ աչքի առաջ պէտք է ունենալ նաև հեթանոսական գուգընթաց աւանդութիւնները: 313 թուի աշնանը Գալլիալուս՝ Եւմենիոս ճարտասանը Կոստանդինի գովասանական խօսք ուղղած ժամանակ շատ անորոշ կերպով ասաց. «Մի ինչ որ Աստուած դրդեց Կոստանդինի արշաւանքի գուրս գալ, ինչպէս մի յաղթութեան, որ առաջուց Աստծուց խոստացուած էր»: Մրաբացատրութեան համար բաւական էր մի երազ: 321 թուին գալլիացի հռետոր Նազարիոսը, Կոստանդին Մեծի առաջ արտասանած գովասանական ճառի մէջ հաստատում է, թէ Գալլիալուս պատմում էին, որ իբրև երկնքի վերայ երևում էին զօրքեր, որոնք յայտնում են թէ իրենց Աստուած է ուղարկել: Եւ թէև երկնայինը չէ յայտնւում երկրայինին, սակայն տեսնում էին թէ օգնութիւնը սրբան զօրեղ կերպով էր փայլում և զինուորների կրած վահաններն ինչպէս էին շողշողում, իսկ իրենք ասում էին. «մենք գնում ենք Կոստանդինի օգնելու»: Այսպիսով հեթանոս աւանդութեան մէջ առանձնապէս ընդգծւում է մի բան — լոյսը, որ հեթանոսները բացատրում են զէնքի շողշողումով և վահանների փայլով: Հետևապէս պնդել, թէ խաչի պատմութիւնը հիմնւում է միայն Եւսերիոսի հաղորդածի վերայ, հնարաւոր չէ թւում: Նազարիոսը չէր կարող տեսիլքի մասին այդպէս հաստատուն կերպով պնդել, եթէ տեսիլքի պատմութիւնը Գալլիալուս ընդունելութիւն գտած չլինէր:

Սակայն Եւսերիոսին պէտք է լուրջ քննութեան ենթարկել մի ուրիշ կողմից: Կոստանդինի վերաբերեալ պատմութիւնը նրա աշխատութեան մէջ ամենաթոյլ էջերն են կազմում: Նա պարզապէս չէ հասկացել Կոստանդինի հաղորդած պատմութիւնը: Կայսրը խօսակից չէ, որին կարելի լինէր տեսակցութիւն (interview) նշանակել և հարցեր տալ:

Նա մի քանի խօսք է ասել, իսկ Եւսեբիոսը բացատրել է իւրատեսակ: Կոստանդինի տրամադրութիւնը նկարագրուած է շատ մութ: Երբ նա տեսնում է խաչը և մահագրութիւնը, սաստիկ յուզւում է և չէ իմանում թէ ի՞նչ նշան է այդ: Հաւանականօրէն նա այնքան անտեղեակ էր քրիստոնէութեանը, որ խաչը նրան միանգամայն անծանօթ էր: Տէրը երևում է նրան երազում, իսկ արթնանալով նա հարցնում է. «Ո՞վ էր սա, ո՞վ երևաց ինձ»: Բայց յետոյ երազը բացատրելու համար, յայտնի չէ ինչո՞ւ նա քրիստոնեայ եպիսկոպոսներ է հրաւիրում, որոնք և հաղորդում են Կոստանդինին տեղեկութիւններ Քրիստոսի մասին: Ի՞նչ պէս կռահեց Կոստանդինը թէ եպիսկոպոսներին պէտք էր հրաւիրել . . .

Եւսեբիոսը շօշափում է և դործի միւս կողմը: Կոստանդինը տեսնում է խաչը մահագրութեամբ և երազի մէջ յայտնւում է նրան Քրիստոս՝ խաչը ձեռքին: Իսկ իւր դրօշակի և սաղաւարտների վերայ հաստատում է ոչ թէ խաչը, այլ Քրիստոսի մենագիրը: Այդպիսով նա գործ է դնում մի առանձին, իրեն բոլորովին անյայտ մի նշան: Հաւանականօրէն Եւսեբիոսը թիւրիմացութեան մէջ է ընկել այն կանխակալ կարծիքով, որ Կոստանդինը տեսաւ խաչը, իսկ դորա մէջ հասկացաւ Կոստանդինի արտայայտութիւնն իրեն յայտնուած Աստուծոյ երկնային նշանի մասին: Կոստանդինի քրիստոնէական տրամադրութիւնը նա նշմարեց այն բանի մէջ, որ վերջինս իւր արձանը կանգնեցնել տուեց խաչազարդ նիզակ ձեռին: Աստուծոյ երկնային նշանի մասին Լակտանցիոսի արտայայտութիւնը նա չհասկացաւ: Յամենայն դէպս երկնային տեսիլը քննադատելու հնարաւորութիւն կայ, և բոլոր դժուարութիւնները հանդիսանում են խառնուրդ Եւսեբիոսի անձնական թիւրիմացութիւնների:

Իբրեւ լրումն պէտք է նկատենք այստեղ նաև երրորդ՝ — Սոզոմէնոսի պատմութիւնը՝ թէ Կոստանդինին Աստուածային նշան յայտնուեց (I, 3): Երբ որ Կոստանդինը Մակսենտիոսի դէմ արշաւանքի դուրս եկաւ, երազում տեսաւ խաչի նշանը, որ փայլում էր երկնքի վերայ և մօտեցող հրեշ-

տակն ասաց. «Ո՛վ Կոստանդին, սրանով յաղթիր», իսկ ուրիշներն ասում են՝ թէ ինքը Քրիստոս երևեցաւ: Յետոյ զալիս է Եւսեբիոսի պատմութիւնը: Սոզոմէնոսի նկարագրութիւնը շատ բնորոշ է. այդ պատմութիւնը նուիրուած է Թէոդոս փոքրին և յանձնուած է իրեն Կ. Պօլսում 440 թուին, որ աւելի հաւանական է թւում: Եթէ այդտեղ յիշուած է նաև Եւսեբիոսն, այնուամենայնիւ նրան այստեղ անպայման նշանակութիւն չի տրուում:

Եւ այսպէս գործի առարկայական մասը պատմաբանները զանազանակերպ են հաղորդում, ուստի և նկարագրութեան իսկական բնաւորութիւնը վերականգնել շատ դժուար է, թէ ի՞նչ տեսաւ Կոստանդինը. երազո՞ւմ՝ թէ արթուն ժամանակ. արդեօք այդ երևոյթը կատարելապէս բնական, թէ գերբնական էր: Եւ այսպէս այդ պատմութիւնը իւր անորոշութեան պատճառով չէ կարող պատմական նկարագրութեան նիւթ լինել, ուստի և կարելի է մի կողմը թողնել: Մեզ համար առաւել կարևոր նշանակութիւն ունի տեսիլքի և Կոստանդինի քրիստոնէութիւն ընդունելու մէջ կապ հաստատելը:

Կոստանդինի կրօնական տրամադրութիւնը խիստ անորոշ էր: Նրա հայր Կոստանդը արեգակի կամ Միհր (Միթրա) աստուծոյ երկրպագու էր, — որի պաշտամունքն արեւմտեան զօրքերի մէջ շատ տարածուած էր: Նոյն իսկ Կոստանդինի ժամանակ այդ աստուծոյ պատկերը պատահում էր շատ դրամների վերայ, և 313 թ. առաջ Կոստանդինի տրամադրութիւնն այնքան անորոշ էր, որ Եւսեբիոսը իսկապէս իրաւունք ունի ասելու, թէ Կոստանդինը քրիստոնէութեան մասին շատ քիչ բան գիտէր, և նրա գիտեցածներն էլ ոչինչ կարելի էր համարել: Կոստանդինի քրիստոնէութիւն ընդունելն աւելի քաղաքականութեան արդիւնք էր քան ներքին կրօնական համոզման: Նա կարող էր աչքի առաջ ունենալ, որ քրիստոնէաներին հալածող կայսրները իրենց կեանքը կնքում էին շատ դժբաղդ կերպով, իսկ իւր հայր Կոստանդը, որ բարեացակամ էր դէպի քրիստոնէաները, վախճանուեց բնական մահով: Այս հանգամանքը չէր

կարող Կոստանդնի մտածողութեան նիւթ չլինել:

Տեսիլը, կամ երազում եղած յայտնութիւնը, նրա հոգումէջ վճռական յեղաշրջումն չէր կարող առաջ բերիլ: Կոստանդնին համեմատելը Պօղոս առաքեալի հետ բոլորովին անյաջող է: Այս երկու բնաւորութիւնները բոլորովին խորթ են միմեանց: 1666 թուին Նիւտոնի աչքի առաջ վայր ընկաւ խնձորը, իսկ 1687 թուին լոյս տեսաւ նրա բնագանացական փիլիսոփայութիւնը, որը բացատրում էր ձգողական ոյժը: Միլիոնաւոր խնձորներ վայր են ընկել Նիւտոնից առաջ և յետոյ, սակայն ձգողական օրէնքը նրանից առաջ և յետոյ չգտաւ որ և է ինքնուս գիտնական: Հետեապէս միենոյն երևոյթը կարող է զանազան տալաւորութիւն անել մարդկանց վերայ, նայած զանազան տրամադրութիւնների: Նիւտոնը վերին աստիճանի դիտող էր, և յայտնի երևոյթից նա օրէնք հանեց: Դամասկոս ճանապարհորդելուց առաջ Պօղոս առաքեալի մէջ կրօնական բոլոր հարցերն իրենց եռման զագաթնակէտին էին հասած, ուստի և մի կարճ «այո» կամ «ոչ» կարող էր վճռապէս փոխել նրա տրամադրութիւնը: Իսկ Եւսեբիոսից մենք տեսնում ենք, որ Կոստանդնի տեսութիւններն անորոշ էին, և երկնային նշանն էլ որոշ պատասխան չէր տալիս գոյութիւն չունեցող որոշ հարցերի նկատմամբ, — այն է՝ ընդհանրապէս Կոստանդինն աչքի չէր ընկնում իւր բարեպաշտութեամբ: Նա մօտեցաւ քրիստոնէութեանը ոչ թէ մի ակնթարթում, այլ աստիճանաբար:

Բոլորովին հիմք չկայ մտածելու, թէ Կոստանդինը մինչև նշանի տեսնելը հեթանոս էր, իսկ նրանից յետոյ դարձաւ քրիստոնեայ: Եւմենիոսը բաւականաչափ այդ հասկացնում է, «աստուածային նշանին», անորոշ գոյն տալով՝ «ինչ որ Աստուած» ասելով: Սենատը տեսաւ, որ Կոստանդինը կրօնական տրամադրութիւնով աւելի մի այլ՝ քան խիստ-հեթանոսական հողի վերայ էր կանգնած, ուստի և նա խմբագրեց Կոստանդնի յաղթական կամարի վերայի գրութիւնը (315 թ.) շատ անորոշ կերպով, թէ «Կոստանդինը ազատեց Հռոմը աստուածութեան ներշնչմամբ» (instinctu divinitatis): Սենատի համար շատ բնական կլինէր զրել՝ «Իւպիտերի հրամանով»,

սակայն նա զգում էր, որ այդ համարձակութիւն կլինէր և Կոստանդնի համար էլ տհաճ: Այստեղից երևում է որ Կոստանդնի տրամադրութիւնը խիստ հեթանոսական չէր, սակայն նա խիստ քրիստոնէական էլ չէր: Եթէ Սենատը կարողանար նոյն իսկ ցոյց տրուած ձևի տակ ծածկել նրան, մեծ ոյժի տէր լինելով (ինչպէս որ նա այդ արաւ նրան pontifex maximum անունը տալով և կամ Կոստանդնին՝ նրա մահից յետոյ, այսինքն քրիստոնէութիւնը ընդունելուց յետոյ, «Սատուած» յայտարարեց), այդ բանը չէր կարող անել Եւմենիոսը: Գալլիացի այս պարզ հռետորը հազիւ թէ խիզախէր այդպիսի բացատրութիւն տալ, եթէ նոյն իսկ իմանար, որ Կոստանդնի քրիստոնեայ լինելը բոլորին յայտնի է:

Նոյն իսկ մենագիրը, որ բաղկացած էր յունական X^P կամ P^X-ից, հասարակ կրճատում կարող է լինել: Այդ մենագիրը կրում էին բոլոր անձինք, որոնց անունները այդ տառերով էին սկսւում. մենագիրն ինքն ըստ ինքեան ոչինչ չէր նշանակում, այլ միայն քրիստոնեաներն էին հասկանում նրա նշանակութիւնը և իրենց դրութեան իբրեւ բարելաւման նշան էին ընդունում: Իսկ հեթանոսների համար բոլորովին անհասկանալի էր այդ: Նոյն մենագիրը յետոյ յաճախ պատահում է նաև ուրիշ շատ առարկաների վերայ, այնպէս որ դիւանականներից մէկը այդ մենագիրը կրողի անձնական տրամադրութեան նշան էր համարում դէպի զօրքը: Կոստանդնի կեանքի մէջ այդ առաջին քայլի նշանն էր միայն դէպի քրիստոնէութիւն: Միայն մի բան հաւանական է, որ այդ մենագիրը գործ է դրուել Լիկինիոսի դէմ կատարած արշաւանքի ժամանակ:

Այսպիսով գերբնական դէպքը, նրա որ մասի մէջ էլ Կոստանդինը ծանրութեան կեդրոնը ենթադրէր, իրեն համար վճռական նշանակութիւն չէր կարող ունենալ:

Սակայն ի՞նչ հիմք կայ մտածելու, թէ քրիստոնէութեանը տիրապետող դիրք Կոստանդինը տուեց: — Եթէ նա քրիստոնէութեան կողմն անցաւ առանց ներքին համոզման, այն ժամանակ դրա պատճառները հաւանականօրէն քաղաքականութեան մէջ պէտք է որոնել:

Այստեղ հարց կարող է լինել միայն քաղաքական այն հարցի յատուկ բնաւորութեան մասին, որով նա դէպի նոր հաւատն էր դառնում, դուցէ և այն հաշուի մասին, որ իւր որոշ ազդեցութիւնն է ունեցել Կոստանդնի քրիստոնեայ դառնալու հանգամանքի նկատմամբ: Արդեօք նա քրիստոնեաների մէջ իրենց համոզումներով կառավարութեանը անսահման հնազանդ մարդկանց էր տեսնում, թէ նա նայում էր նրանց վերայ իբրև մի կուսակցութեան, որի վերայ յենուելն օգուտ էր միապետութեան հակառակորդների դէմ մղած կռուի մէջ. առաջինը անհաւատալի է: Առաջին երեք դարերի քրիստոնէութեան պատմութիւնը բաւական ցոյց տուեց, որ քրիստոնեաների համոզմունքների մէջ այնպիսի դադանիքներ կային, որոնց դիպչել նրանք աշխարհի ոչ մի կառավարչի չէին թոյլ տալ: Միւս կողմից, իբրև քաղաքական յայտնի կուսակցութիւն, այսինքն, պատարաստ կազմակերպուած ոյժ, որից կարելի էր օգտուել անձնական թշնամիների դէմ մղած կռիւների ժամանակ, քրիստոնեաները գոյութիւն չունէին:

Կոստանդինը տեսնում էր, որ քրիստոնեաներին հաւածելը հռովմէական կայսրութեան կազմի մէջ մի տենդային դրութիւն է մտցնում, մտքի հիւանդ տրամադրութիւն ստեղծում: Դիոկղետիանոսի ժամանակ հեթանոսներից շատ շատերը հալածանքներին չէին համակրում, և այդպիսով դէպի քրիստոնէութիւնը պետութեան յարաբերութեան մէջ յեղափոխութեան համար հեթանոսութեան կողմից ոչ մի վտանդ չկար, ևս առաւել այն պատճառով, որ քրիստոնեաների կեանքն էլ այնպէս էր կազմակերպուած, որ նրանք ամենաչնչին պահանջներն էին անում: Նրանք կամենում էին միայն, որ Աստծուն հաւատան իրենց տեսակէտով, պաշտօնների չէին ձգտում և նոյն իսկ պատրաստ էին մերժելու իրենց կրօնին որ և է առանձնաշնորհումներ տալը, (օրինակ՝ թափօրների թոյլտուութիւնը): Նրանց համար բաւական էր աղօթատներ ունենալ, որտեղ ազատ աղօթել կարողանային: Կոստանդինը կարող էր դրանով էլ բաւականանալ, սակայն նա աւելի է առաջ դնում, ոչ միայն

ազատութիւն, այլ և նա քրիստոնէութեանը տիրապետող դիրք է տալիս:

Մարդիկ ընդունակ են անտարբեր նայել որոշ իրերի վերայ, երբ դրանք անձնականի բնոյթ չունեն: Հեթանոսները կարող էին կրօնական տրամադրութիւն չունենալ. նրանք կարող էին իրենց աստուածներին չպաշտպանել: Սակայն երբ քրիստոնէութիւնը տիրապետող կրօն դարձաւ, իսկ հեթանոսութիւնը բռնեց երկրորդական տեղ, այսպէս ասած, ճշդութեանի և յետնեակների շարքն անցաւ, այն ժամանակ նմանօրինակ փոփոխութիւնը սլակաս համարձակութիւն չէր:

Շատ պարզ է, որ կարևոր մի հանգամանք է իմանալ, թէ հռովմէական կայսրութեան մէջ ռքան քրիստոնեայ կար, և թէ տէրութեան մէջ նրանք ի՞նչ տոկոս էին կազմում ¹⁾: Եթէ նրանք տէրութեան մէջ կէս ու կէս էին, այն ժամանակ ընտրութիւնը շատ դժուար չէր, որովհետև քրիստոնեաներն աւելի եռանդուն էին: Սակայն հարցը դժուարութեան է հանդիպում հէնց այն կէտում, թէ ռքաւի էր հռովմէական կայսրութեան ամբողջ բնակչութիւնը: Գիրքոնի կարծիքով Կոստանդին Մեծի ժամանակ քրիստոնեաները ամբողջ հռովմէական կայսրութեան բնակիչների $\frac{1}{20}$ մասն էին կազմում: Սրան համաձայն է նաև Ֆրիդլենդերը: Մի ուրիշ պատմաբան Րիխտեր ²⁾ (H. Richter, Das weströmische Reich. Berlin 1865) ենթադրում է, որ քրիստոնեաները բնակչութեան $\frac{1}{10}$ մասն էին կազմում. 5—6 միլիոն քրիստոնեաներին ընկնում էր 45 միլիոն հեթանոս: Վերջին թիւը հաստատւում է Յուլիոս Բէլոխի դասական աշխարհի բնակիչների հետազօտութիւններով (J. Beloch, Die Bevölkerung der griechisch-römischen Welt. Leipzig, 1886):

Ընդհանրապէս պէտք է ասել, որ հնումը ճշգրիտ վիճակագրութեան մասին զաղափար ունենալ անգամ չէին կարող: Դասական հեղինակների գրութիւնների մէջ պա-

¹⁾ Համմ. A. Harnack. Mission und Ausbreitung des Christentums in den ersten drei Jahrhunderten. Բ. հրատ, Պր. II. Leipzig, 1906. Էր. 276—287. A. B.

տահուժ են տեղեկութիւններ բնակիչների խտութեան վերաբերեալ և թուեր են առաջ բերւում, օրինակ, զօրքի քանակի համար, սակայն այդպիսի տեղեկութիւններին և թուերին պէտք է շատ զգոյշ վերաբերուել: Ըստ Բէլոխի եղրակացութեան՝ Օգոստոսի մահուան ժամանակ յոյն արեւելքում 28 միլիոն բնակիչ կար, իսկ լատին արեւմուտքում Դանուբ գետի շրջակայ երկրների հետ ի միասին 26 միլիոն, հետեապէս հռովմէական կայսրութեան մէջ կար ընդամենը 54 միլիոն բնակիչ: Այս թիւը աւելի սրոշ կերպով ստորաբաժանւում է հետեւեալ ձևով. Եւրոպայում՝ 23 միլ., Ասիայում 19½ միլ., Աֆրիկայում 11½ միլ., մասնաւորապէս՝ Եգիպտոսում 5 միլ., Իտալիայում, Իսպանիայում, Ասորեստանում և Ասորիքում վեց-վեց միլիոն:

Մեզ համար հետաքրքական է իմանալ, թէ Կոստանդին Մեծի ժամանակ արդեօք բնակիչների քանակն աւելացաւ և ընդհանր: Եթէ հիմնուենք Բիխտերի տուած տեղեկութիւնների վերայ, պէտք է ասենք, որ աւելի պակասել է բնակիչների քանակը: Յամենայն դէպս կարևոր է այն փաստը, որ Օգոստոսի ժամանակ կայսրութեան մէջ չէր մտնում Միջագետքը, որը յետոյ միացրուեց: Բայց ճիշտ նշանների համաձայն, եթէ նոյն իսկ բնակիչներն աւելացան էլ, միայն շատ քիչ, հաւանական է որ աւելի պակասեցին: 252 թուին կայսրութեան մէջ առաջ եկաւ ժանտախտը—pestis, որը տևեց 15 տարի, երկիրը վերին ստորձանի աւերակ դարձաւ. այդ դատարկութիւնը Կոստանդինի ժամանակ չէր կարող լցուել: Ընդհանրապէս կարելի է ասել, որ կայսրների ժամանակ բնակչութեան քանակը չէր աւելանում: Ի հարկէ այժմ բոլորն էլ չեն հաւատում այն հրաշապատումին, թէ կայսրների ժամանակ բռնապետութիւնն էր տիրում և բոլորն էլ շատ վատ էին ապրում: Ընդհակառակը, հասարակապետութեան ժամանակ գաւառները շատ վատ դրութեան մէջ էին: Ազնուականները Հռովմում պարտքերի տակ ընկնելով, գաւառներն էին գնում հարստանալու համար,

իսկ դատաստան և կառավարութիւն՝ հասարակապետութեան ժամանակ Հռովմում գտնել շատ դժուար էր: Կայսրների ժամանակ այսպիսի կարգեր հազուադիւս էին, մինչև իսկ անհնարին: Այսպիսով, կայսրների ժամանակ զաւառները գտնուում էին ծաղկեալ դրութեան մէջ:

Սակայն քաղաքականութեամբ ամէն ինչ չէր վերջանում: Յունաստանում դեռ ևս շատ վաղուց նկատուած էր բնակիչների թուի նուազիլը կենսական պիտոյքների պակասութեան պատճառով: Արհեստագործութիւնը և առևտուրը ծառայում էին հարուստների շահերին, իսկ բնակչութեան մեծ քանակութիւնը ապրում էր երկրագործութեամբ: Իտալիայում երկրագործութիւնը շատ ընդարձակ էր. հողը որ և է կերպ պարարտացնելու մասին, օրինակ, գումանոյի աղբով, խօսք լինել չէր կարող, իսկ այդ տեսակ երկրագործութիւնից յոգնում է հողը: Վարրոնը († 27 թ. Ք. Ա.) գրում է, որ 10 իւգերի վերայ ցանւում է 5 կամ 6 մօդ գարի և բերք ստացւում է մէկին 10. Կիկերոնն էլ, Վերրեսի դէմ խօսած ճառի մէջ, ասում է նմանապէս, որ Իտալիայում բերքը մէկին 10 և 8 է լինում, ցանած 6 մօդից ստացւում է 48, իսկ ամենաառատ տարին՝ 60. մինչդեռ Կօլումբլան, որ գրում է Կլաւդիոսի ժամանակ († 13 հոկտ. 54 թ. Ք. Յ.) ասում է, «հազիւ թէ որ և է մէկը յիշէ այնպիսի դէպք, երբ բերքը մէկին 5 եղած լինի»: Այդպիսով, մենք տեսնում ենք, որ բերքը կիսով չափ պակասում է: Այդպիսի հանգամանքներում միջին դասակարգի մարդու համար ապրելը շատ դժուար էր: Ուստի և Բելոխի տուած թիւը, որով Օգոստոսի ժամանակ բնակչութեան քանակը 54 միլիոն է որոշւում, կարելի է ընդունել նաև իբրև չափ Կոստանդնի ժամանակի բնակչութեան:

Յաջորդ դատողութիւնների համար կարևոր են տեղեկութիւններ մեծ քաղաքների բնակիչների քանակի մասին, ինչպէս են Հռովմի, Ադէքսանդրիայի և Անտիօքի: Ադէքսանդրիայի բնակիչների թիւը նորա ամենածաղկեալ ժամանակ, ճորտերի հետ միասին հաշուած, 1/2 միլիոնի էր հասնում, իսկ Օգոստոսի և իւր յաջորդների ժամանակ,

գուցէ, այդ թիւը նոյն իսկ աւելացաւ: Մեր դարաշրջանի սկզբին Անտիօքում կար 300,000 ազատորիար, այնպէս որ բնակիչների քանակով սա մրցում էր Աղէքսանդրիայի հետ: Այդչափ որոշ չեն Հռովմի բնակչութեան մասին եղած տեղեկութիւնները: Շատերն են վճռել այս հարցը և չափազանցութիւնների մէջ ընկել: Գայթակղեցուցիչ հանգամանք էր այն վճիռը, որ տէրութիւնը որոշեց քաղաքացիներին՝ սկզբում չափաւոր գներով, իսկ յետոյ էլ ձրի ցորեն բաժանել: Սակայն չպէտք է չափազանցացնել այս հանգամանքի նշանակութիւնը: Ցորենի բաշխման քանակը որոշ էր, և ամէն մարդ չէր կարող ստանալու յոյս ունենալ, այլ միայն նա, ով որ ցուցակի մէջ էր ընկնում: Միևնոյն ժամանակ ցորեն բաժանում էր ոչ միայն Հռովմայեցիներին, այլ և մօտակայ գիւղերի բնակիչներին: Ամէն մի Civis Romanus, եթէ նա նոյն իսկ ապրելու լինէր Օստիայում կամ Ֆլորենցիայում, մնում էր նոյն Հռովմի քաղաքացին և իրաւունք ունէր հաց ստանալու: Սակայն հարցն այն է, թէ արդեօք նրա համար ձեռնտու էր Ֆլորենցիայից Հռովմ գալ 5 մօղ ցորեն ստանալու համար: Այդպիսով բաժանած ցորենի քանակը հիմք չէ ծառայում Հռովմի բնակիչների թուի մասին դատելու:

Բարեբախտաբար մենք ուրիշ հաստատուն փաստեր ունենք Հռովմի ամբողջ բնակչութիւնը որոշելու համար: Սպարտիանի վկայութեամբ (ռ. 23) Սիպտիմոս Սեվերոս († 4 փետր. 211 թ. Եօրկում) կայսրը թողել է եօթ տարուայ համար Canon frumentarius, որի համաձայն Հռովմում իւրաքանչիւր օր պէտք է գործադրուէր 75,000 մօղ ցորեն. իսկ եթէ պակաս էր գործադրւում, այն ժամանակ սով էր առաջ գալիս: Զուգընթաց տեղեկութիւններ գտնւում են Լուկիանոսին ուղղած բացատրութիւնների մէջ, որից երևում է, որ Հռովմում իւրաքանչիւր օր գործադրւում էր 80,000 մօղ ցորեն: Այս թուերից կարելի է Հռովմի բնակիչների քանակը դուրս բերել 750 — 800,000: Այս թիւը որոշւում է հետևեալ եղանակով:

Յայտնի է, որ հին յոյներն ու Հռովմայեցիները բու-